ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
REPUBLIC OF ARMENIA
DEPUTY MINISTER OF ENVIRONMENT
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

№ 3/02.5/2399
«_____» «_____» 2025թ.

«ԷՅԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Տիգրան Ավետիսյանին

Հարգելի պարոն Ավետիսյան

Ի պատասխան Ձեր 2025 թվականի փետրվարի 13-ի N04/25 գրության՝ ներկայացնում եմ շրջակա միջավայրի նախարարության դիտողությունները և առաջարկությունները Տավուշի մարզի Վազաշենի հանքերևակման տեղամասում ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով իրականացված 2024 թվականի չորրորդ եռամսյակի և տարեկան մշտադիտարկումների հաշվետվության վերաբերյալ:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Տիգրան Գաբրիելյան

Հողերի և ընդերքի քաղաքականության վարչություն,
Նաիրա Պետրոսյան, 011 818 525
Կենսառեսուրսների կառավարման վարչություն,
Նարինե Ղազարյան, 011 818 530

0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
3 Government Bld., Republic Sq., Yerevan, Armenia, 0010
0010, Армения, г.Ереван, Пл. Республики, Дом Правительства 3
deputymin518@env.am | www.env.am
+374 11 818 518 | +374 11 818 506

Դիտողություններ և առաջարկություններ

«ԷՅԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով իրականացված 2024 թվականի չորրորդ եռամսյակի և տարեկան մշտադիտարկումների հաշվետվության վերաբերյալ:

1. Առաջարկվում է այսուհետ.
– հաշվետվություններում մշտադիտարկման օբյեկտ հանդիսացող՝ «Վայրի բնություն, կենսամիջավայր, Կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ»-ի վերաբերյալ մշտադիտարկումների արդյունքները ներկայացնել՝ հաշվի առնելով Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N191-Ն որոշման հավելվածի Ձև N1-ի՝ «Վայրի բնություն, կենսամիջավայր, Կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակների» համար նախատեսված ցուցանիշներին համապատասխան, այն է՝ «տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն»:
- Տարեկան հաշվետվության մեջ խմբագրել՝ «Բնության պահպանության օրենսդրորեն պաշտպանվող տարածքներ», «մեծ կենսաբազմազանություն ունեցող տարածքներ», «ՀՀ-ում պաշտպանվող տեսակները» հասկացությունները և այլն:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվահիրավական դաշտ» բաժնում օրենքների ցանկից հանել «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» և «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» օրենքները, քանի որ ՀՀ հարկային (04.10.2016թ.,ՀՕ-165-Ն) օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով վերջիններս ուժը կորցրած են ճանաչվել: Չի գործում նաև ՀՀ կառավարության «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» որոշումը (30.12.1998թ. N864): «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքի վերնագիրը փոխվել է՝ (21.12.17թ. ՀՕ-269-Ն) «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենք:
- Տարեկան հաշվետվությունը ներկայացնել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ հաստատված հավելված Ձև N2-ի պահանջներին համապատասխան:
- տվյալների վերլուծության, գնահատման և հետագա ուսումնասիրությունների նպատակով, մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնել Word կամ Exsel ձևաչափով՝ ինչպես նաև մշտադիտարկումների իրականացման վայրերը համապատասխան քարտեզագրական նյութերում՝ նաև WGS-84 (ARMREF 02) կոորդինատային համակարգով: